ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____ « ____ »_____ **2024 թ.** **ք.Երևան**

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 200-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի օգոստոսի 17-ի N 259-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 200-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված N 3, N 4 և N 6 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 3-րդ հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության կանոնադրության՝

ա. 3-րդ բաժնի 3.1 կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3) աջակցում է օտարման կամ վարձակալության տրամադրման ենթակա պետական գույքի վերաբերյալ առկա տեղեկատվության հրապարակայնությանը: Կազմում է էլեկտրոնային աճուրդով օտարման կամ վարձակալության տրամադրման ենթակա գույքի վերաբերյալ ամբողջական փաթեթը, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդի կազմակերպման ժամկետի մասին հրապարակային ծանուցման տեքստը և ներկայացնում հրապարակման»,

բ. 3-րդ բաժնի 3.1 կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 8.1-րդ ենթակետով.

«8.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում և անցկացնում է պետական կառավարման համակարգի մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) մրցույթները,

2) Հրամանի 4-րդ հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության կանոնադրության վերնագրում «ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառից հետո լրացնել «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ» բառերը,

3) Հրամանի 6-րդ հավելվածով հաստատված՝ Հայաստանի հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի քարտուղարության կանոնադրության՝

ա. 2-րդ բաժնի 2.1 կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 2.1-րդ ենթակետով.

«2.1) էլեկտրոնային համակարգի (www.e-auctions.am) միջոցով պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացի ապահովումը,»,

բ.3-րդ բաժնի 3.1 կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 8.1-րդ ենթակետով.

«8.1) իրականացնում է էլեկտրոնային համակարգի (www.e-auctions.am) միջոցով պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացը,»:

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Подписано: AVETISYAN ARNAK 1701920336